

կույտները և որովհետև ընդհանուր ժողովները նախագահ սրբազան Սահակեան արքեպիսկոպոսը չը կամեցաւ նախագահել ժողովին, ուստի այդ օրվայ ժողովի նախագահողն եղաւ պ. Հ. Աւարբեկեան, ժողովի առաջարկութեամբ:

Քուէարկութեան արդիւնքը հետեւեալն եղաւ: Ընտրվեցան ձայներէ բացարձակ առաւելութեամբ վարչութեան անդամ

- 1) Պ. Հ. Աւարբեկեան
- 2) > Յովհաննէս Կամսարական
- 3) > Նիկողայոս Աթաբեկեան
- 4) > Աւարբեկ Բաբայանեան
- 5) > Մնացական Խոնտունց, Իսկ փոխ-անդամներ
- 6) > Սարգիս Գուլի-Քիւսպեան 7) Աւարբեկ Զայիկեան և 8) Վլադիմիր Բարսեղեան:

Երկրորդ օրը նորընտիր վարչութիւնը ժողով գումարելով, կատարեց նախագահի, փոխ-նախագահի, գանձապահի և դործավարի ընտրութիւնը:

- Ընտրվեցան
- Պ. Հ. Աւարբեկեան. Նախագահ
 - > Յ. Կամսարական. Փոխ-նախագահ
 - > Մնացական Խոնտունց. Գանձապահ
 - > Աւարբեկ Բաբայանեան. Գործավար

Ինչպէս լուծուեց, նորընտիր վարչութեան նշանակեալն է իր գլխաւոր ուղարկութիւնը դարձնել ժողովրդական գրքերի հրատարակութեան վրա:

Շուշեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կ. Պոլսից, պ. Հայկակից, այս բաժնի ստացանք հետեւեալ տեղեկութիւններ: Պատրիարքն հրաժարականն առ այժմ ետ առաւ, մեծ-նպարքով յորդորմամբ: Այդ մասին պ. Հայկակի մանրամասն թղթակցութիւնը կը տպւնք «Մշակի» հետեւեալ համարում, չաբաթ օր:

Մեզ գրում են Երեւանից հետեւեալ: «Մեր քաղաքում զարմանալի կերպով շատացել են կատաղած շները: Քաղաքային վարչութիւնը կարգադրել է անխնայ կոտորել թափառական շներին, որ և կատարվում է Սակայն քանի մի օր սրանից առաջ Կօնդ ասում թաղում կատաղած շնիկ կրծ-

զարմացած.— Ես ճանաչում եմ դրա հօրը. ողորմածաճողին մի շատ հանդարտ, սուրբ մարդ էր: — Աշխարհս քանի գնում է, վատանում է, Պօղոս, վերջը մոտենում է, մարդիկն էլ փոքրանում են: Սահմանն անցնում է...»

Այդ խօսքերից յետոյ Գասպարը փոխեց դիրքը. փոխանակ չորսը միշտ փողոցի մի կէտին նայելով, ծանր ծանր ոտները ծալեց, դրեց տակին, թթափոտի տուփը հանեց: Պօղոսը անպատշաճ պիտի պատասխանէր այդ խօսքերին, բայց մանրամասն կարծես հրամայեց լուել: Որպէս թէ իր խօսքերի շարունակութիւնը պահելու համար, նա մինչդեռ փոխում էր դիրքը, գլխով մի քանի անգամ հաւանութեան նշաններ արաւ, որոնցով կարծես ասում էր՝ «սպասիր, սպասիր»: Երկու անգամ ներս փչելով քթախոտը իր կոտր քթի լայն ու մաղուտ ծակերը և ապա սև կեղտոտ թաշկինակը մօտեցնելով քթին, նա ասեց.

— Մենք էլ ենք եղել... երեխայ: Մեր ժամանակը ինչ ենք իմացել թէ աշխարհս ինչ է. մինչև որ տասն անգամ չեն ասել, չեն ծեծել, չենք հասկացել:

— Մեր ժամանակներից ինչու ես խօսում, պատասխանեց Պօղոսը.— մենք գառներ էինք, գառներ:

— Մենակ մենք չէինք... քիթը բարձրաձայն սրբելով վրա բերաւ մանրամասնաբ.— բոլոր աշխարհն այդպէս էր, եղբայր. սէր կար մարդկանց մէջ, միաբանութիւն կար. մէկը միւսին շահում էր, աշխատանք կար... Հիմա ինչ է մնացել:

Եւ այդ հարցի հետ Գասպարը ուսերով և թեւերով մի այնպիսի յուսահատական նշան արաւ, որ Պօղոսի նոր հանդարտութեամբ սիրտը դարձեալ առաջվայ ծանրութեան տակ ընկաւ:

— Օգուտ չի մնացել, Աստուած ձեզ հաւատացնէ, շարունակեց մանրամասնաբ, աւելի ես սաստկացնելով սրտի ծանրութիւնը.— դալիս ենք, նստում ենք, նստում, գնում, օրվայ հացն էլ չենք կարողանում աշխատել:

Պօղոսը մի խոր հոգոց հանելով պատասխանեց.

— Ան ուր մնաց այն ժամանակը. քսան կօպէկ

ված մի 20 տարեկան հայ տղայ մեռաւ անասելի տանջանքների մէջ:

Հիւս-ՆԱԽԻՑԵԱՆՆԻՑ մեզ գրում են մարտի 3-ից հետեւեալը: «Այստեղ ձմեռը նոր է սկսվում, օրերը աւելի և աւելի յորտում են, կարծես նոր ենք մտնում նոյեմբեր ամսի մէջ: Տեղիս վաճառականութիւնը շատ վատ դրութեան մէջ է. գործեր ամենևին չը կան: Խանութատեղերից իւրաքանչիւրը օրական հազու 1 կամ 2 բուրլու առևտուր է անում: Ինչպէս կարող է վաճառականը իր ընտանիքով համ դրանով ապրել, համ էլ խանութի ծախսերը քաշել:

ՄԵՐՈՒՄԻ գիւղից մեզ գրում են: «Փետրվարի 12-ին տեղիս ծխական դպրոցի դասընթացում ուսուցիչները, մասնակցութեամբ տեղական մի քանի բնակիչներ երկրորդական դասարանի ի նպաստ նոյն դպրոցի գրադարանի «Մեր դիւանդան» անունով մի կատակերգութիւն, երեք արարածով, հեղինակութիւն Մատթէոս Դահանին: Հետեւեալ օրը կէսօրին, նոյն խաղը կրկնեցաւ յատկապէս կանանց համար, քանի որ մեր տիկինները ու օրերը դուրսը դուրս ևս այն ասպական, նախապետական բարձր ու վարժ ունեն, որ տղամարդկանց հետ միասին չեն համաձայնի զայ դասընթացում: Պ. Դահան, տեղացի մի ինքնուս երիտասարդ է, որ ունելով բարձրագոյն դասընթացում կուրսիւններ և լաւ ծանօթ լինելով իր նախնի գաւառի ընտանեկան և հասարակական կեանքի հանգամանքներին, կարողանում է հիւսել աշուղ կատակերգութիւններ, որոնք եթէ չունեն գրական և գեղարուեստական բարձր արժէք, շատ բնական և հետաքրքիր կերպով են ներկայացնում տեղական առօրեայ կեանքի պատկերները և տեղական տիպերը: Այդ նոր պիէսայի գլխաւոր նշանակութիւնը և հետաքրքրութիւնը նրանումն է կայանում, որ գործող անձինք առկած են մեր գիւղի հասարակութեան մէջ ապրող և կենդանի թէ արական և թէ իգական տիպերից: Այդ պիէսան խոր տպաւորութիւն թողեց հանդիսականներին ի վրայ, բայց և ունեցեց թշնամեցան հոգեբարձուների, ուսուցիչների և պիէսայի հեղինակի հետ:

Այս բաժնի ստացանք Երեւանից, մեր թղթ-

էր տալիս ութ, ինչը գրվաճաջ միս առնում. աւելորդ վեց շահի, իւրը չորս մանկէթ, հիմա միլին երկու երեք գին է դառել:

— Մենակ դա չէ, եղբայր սիրելիս. ախր այդ թանգութիւնը ու ընթաց.— Մարտիկի վատացան, Աստուած ճանապարհը թողած սարկի, ձորեր ընկան, սահմանած սահմանն անցան ու այս պատահաւոր արժանացանք: Ինչ ես կերծում, Աստուած վեր կանխի, որ այն փոքրիկ լակոտը ինձ այնպէս ծաղկէր. էլ ինչպէս պիտի պատժի մարդկանց, միանգամայն խօ չի կոտորելու: Բազմ. մի մարդու տանն էի կենում, մի շատ լաւ և քսի մարդ էր. թէ այժմ մեռած է՝ Աստուած հոգին լուսաւորել, եթէ կենդանի է՝ բարի տալ. նա էր պատճառը որ զրեկ կարողացաւ տրեղեցի: Միշտ հին և նոր կտակարան էր կարդում ընտանի տեղ Աստուած ասել է թէ ես քարկայող եմ, հօր մեղքը նրա որդիներից կանգնում: Ինչեւ պարտաւոր: Գեռ այսպէս որ այն հին, սուրբ ժամանակներն է ասել, հիմա ինչ պիտի ասէ:

— Ի՞նչ, հիմա մտիկ էլ չեն անում. որ ուղում ես խօսել, ասում են լուրի, քո ժամանակը անցել է, դու հին ես:

— Իսկ դու ինչու չես ասում, թէ հին եմ՝ որ լաւ եմ է, ասա ինչու հին արծաթի դրամը նորից թանգ է. ասա ինչ է պատճառը, որ երբ նոր գինին են տալիս, ասում են եմ խմում, կը շնորհակալանք: Եղբայր, եթէ հիններն էլ չը լինեն, աշխարհս ինչի նման կը լինի. ամեն օգուտ, սէր, բարոյութիւն հինների մէջն է:

— Անցեալ ամառը գիւղէի գնացել, պատասխանեց Պօղոսը.— մի մարդ եկաւ, մի լաւ հագնված պարոն. կարծում էին թէ մի մեծ մեծաւոր է, երկէ է հողերին մտիկ ուղում. այդ օրը մնաց, միւս օրը գնաց գիւղի մի ու բարձր սարի գլուխը, թէ ինչ է, այնտեղ մի հին քանդակ երկրեցի կայ, պիտի տեսնեմ. իրիկունը որ յետ դառաւ, չորերը պատռուտած, ձեռքերը արհեստ թաթախ էին. բայց էլ խօսք չէր գտնում երկրեցի գոյնը:

— Տեսնում ես, մի այդպարոնին ասող լինել, թէ

թակցից հետեւալ լուրը: «Այս օրերումս վախճանեցաւ մեր հարուստներից մէկը՝ Մկրտիչ Սահանան: Հանգուցեալը թողեց բաւական մեծ կարողութիւն իր երկու աղջիկներին, իսկ իր երկու յարկանի հինգ հատ խանութներ, որոնք զբաղւում են քաղաքիս ամենալաւ փողոցներից մէկի վրա, նա կտակեց Նրեանի ս. Կաթողիկէ եկեղեցուն: Այդ բարեգործութեան շարժառիթ տրուող եղել է հանգուցեալի գուտար, տիկին Աննա Թալիբեան, որ անդադար յորդորել է եղել իր հօրը մի բարի յիշատակ թողնել: Հանգուցեալը թաղվեցաւ Կաթողիկէ եկեղեցու գաւթիքում:

Երեւանից մեզ գրում է մեր թղթակիցը թէ այս տարի Երևանում սարսափելի ձմեռ է անում: Անցեալ տարի այս ժամանակը բացվել էին այդպիսիները, բայց այժմ ահա մարտ ամսին է, դեռ ևս ձիւնը ծածկում է սար ու ձոր: Մինչև Զատիկը հազու թէ սկսվեն այգիների սկզբնական աշխատանքները:

Երկուշաբթի, մարտի 9-ին, կայացաւ քաղաքային Գումայի նիստը, որը բաւական բաղմունք էր: Վճնվող հարցերից մէկը ձայնաւոր Դինգելտեռի գեկուցումն էր՝ քաղաքի քրտուարների վերանորոգման մասին: Պ. Գեկուցանողը շատ զեղեցիկ ֆրազներով խօսեց լաւ տրօտուարներ ունենալու հարցի մասին, բայց ինքը՝ ոչ մի գործնական միջոց չառաջարկեց գործը զուլի բերելու համար: Գումայն վճեց գործը յանձնել ֆինանսական յանձնաժողովին: Երկրորդ հարցը ձայնաւոր պ. Խլանեկի արաւ ճարտարութիւնը.— նորից քննութեան ենթարկել Գումայի փետրվարի 16-ի վճիւնը: Այլընտրանք չկալու. վերաբերմամբ: Ինչպէս յայտնի է փետրվարի 16-ին Գումայն վճեց չընդունել իր անօրինական ներքոյ Ալեքսանդրեան այգին այն պայմաններով, որոնք առաջարկված էին կառավարութեան կողմից: Պ. Խլանեկի ակնարկեց այն բանի վրա, որ եթէ Գումայն չընդունի այգին, քաղաքի բնակիչները կարող են բողոքելով դրկել այդքան, քանի որ միտք կայ այդպիսի կառուցանել մի շինութիւն ինտենդանտու: Թեան համար Այս անգամ ձայնաւորների արամադրութիւնը բողոքով ուրիշ էր, քան այդ հարցի առաջին քննութեան ժամանակ. այս անգամ մեծամասնութիւնը վճեց, որ այգին պէտք է ընդունել:

Լաւ, հիները լաւ էին իրանց համար. քեզ ինչ. ախր ասում ես լուսաւորված եմ, դէս եմ, դէն եմ, կը կարողանամ հինների խելքը ունենալ ու այնպիսի բան չիմել, որ զեղանից յետոյ եկողն էլ զեղ ողորմի ասի: Այդ նոր պարոնների լաւ ու մեծ բանն էլ այն է, որ ինձ ու թեզ պէս հինների ծաղրելով կնկայ երեսի թող լինի ես առել, հետները կնկիկ ու աղջիկ քարչ են տալիս բաղարներով, ծիծաղելով: Ո՛ր մնաց ամօթը: Ել չին իմանում թէ անուանց հինների ամօթին նրանց խելքի կէսն էլ չեն կարող ստանալ: Աստուած ամօթն է յարգում, Պօղոս, և ամենողներին է ճանաչում:

Պօղոսը թէ և ուղարկութեամբ լուում էր այդ խօսքերը, բայց չէր կարողանում մոռանալ իր սրտի հարցը. նա աւելի ես համոզվել էր որ այժմ, այս բաժնի ոչինչ չէր կարելի խօսել:

— Ի՞նչ, Տեղը իրանց հետ, ասեց նա վերկենալով և ծանր կերպով իր փափախը թափ տալով.— մեզ համար ինչ կայ, մի երկու երեք տարի կենալ ունենք, կազատվենք, կը գնանք, կը մնան իրանք: Ասում ենք լաւ ապրենք:

Պօղոսը հեռացաւ խանութից ոտները դանդաղ քարչ տալով: Նրա միտքը, երկի, շատ ծանրացել էր, որովհետև երբեմն կանգ էր առնում, գըլուխը շարժում էր ու էլի գնում:

Արեգակը վաղուց մայր էր մտել. մութը ինչու էր երկրի վրա: Երկրեցու բակում խօսելից կշտանալով, ծերունիների մի խումբ, որի մէջ էր և Պօղոսը, վերկացաւ, ուղեւորից դէպի հրապարակ: Այդտեղ ամենքը գրկեցան:

Պօղոսը դարձեալ գնաց Գասպարի մօտ, «ողորմի Աստուած» ասեց և այս անգամ երկար չը ստանալով, յայտնեց խանութպանին իր միտքը:

— Մեծ լաւութիւն կանես, խոջա-Գասպար, մինչև գերեզման չես մոռանայ, այնպէս խմցիր թէ ինքը ես ինձ պարգեւում:

Այդ խօսքերը երկրորդ անգամն էր կրկնել Պօղոսը, բայց մանրամասնաբ լոււ էր, մի բաւական չէր ասում, մի շարժողութիւն անգամ չէր դործում: Նրա ցուրտ դէմքը երեկոյան այդ

խակ հակառակ կողով շատ թոյլ կերպով էր ընդդիմադրում: Երկար վիճաբանութիւններից յետոյ հարցը ենթարկեցաւ քուէարկութեան: Ներկայ եղող 43 ձայնաւորներից 38 ձայն տուցին, որ միջամով բարձր կառավարութեան առաջ Ալեքսանդրեան այգին քաղաքի անօրինական ներքոյ դնելու համար: Վճիւնը ընդունեցաւ բուն ծափահարութիւններով թէ ձայնաւորների և թէ հասարակութեան կողմից:

Ամսիս 8-ին, Մանգլիսում, կարճատև հիւանդութիւնից յետոյ մեռաւ Թիֆլիսի բնակական ուսումնարանի նախկին դիրեկտոր Պենչիստի: Հանգուցեալը յայտնի էր իբրեւ մի անկախ մարդ, և անկողնապահ ու հաստատաւոր մանկավարժ: Պենչիստի մահը մեծ տխրութիւն է նրա բազմաթիւ աշակերտների, ծանօթների և համակողմների համար:

ԲԱՐՈՒԻ մէջ հրատարակվող «Բացմի» քաղաքը լսել է, որ Բաշիլիքի ֆիրման մտադիր է Բագուի շրջակայքում գործարան կառուցանել՝ սօդա պատրաստելու համար:

Չանդեզուր գաւառի ՇԻՍԱՆՈՂ գիւղից մեզ գրում են հետեւեալ փետրվարի 27-ից. «Յոնայալից սկսած մինչև այժմ համարեա ամբողջ Չանդեզուրում տիրում է սաստիկ ցուրտ. շատ տեղ ճանապարհները կապվել են: Լեռնային գիւղերում կենդանիները գոմից դուրս չեն բերում. տարաքաղաքային կենդանիների ձմեռվայ պաշարն էլ քիչ է, և խոտի սով է նկատվում: Սաստիկ ցուրտի պատճառով մեծ քանակութեամբ ոչխար է կոտորվում ֆետրվարի 10-ին Շիկարնոյ գիւղացի մի երիտասարդ ոտով գնում է դէպի Կալէր գիւղը. ճանապարհին խրվում է ձիւնի մէջ և ամբողջ օրը մնում այդ դրութեան մէջ: Միւս օրը նրան գտնում և գիւղն են տանում, որտեղ հասնելուն պէս նա մեռնում է»:

Թիֆլիսի Առևտրական կուբում, նախկին Արշակունու տանը, մարտի 11-ին Թիֆլիսի թուրք հասարակութիւնը տուեց մի դիմա կա հա ն ո զ է ս, յօգուտ Թիֆլիսի թիւրքահոգեւոր դպրոցի աղքատ աշակերտների:

պահուց խիստ մեայլ էր, խիստ տխուր: Հոգու պարտք է, խոջա-Գասպար, կը տամ ինչպէս որ լինի, Աստուածդ սիրես, երեսիս վրա մի թողիր, շատ հարկաւոր է, խօսեց Պօղոսը, տեսնելով որ մանրամասնաբ վերցնում է խանութի կողմէքը:

— Եղբայր, հաւատ չը կայ. օգուտ չի մնացել այս առևտրի մէջ. չը կայ, երկրորդ վկայ է չը կայ:

Եւ Գասպարը իր կօշիկները առնել դրեց, հագնելու համար: Պօղոսը շտապեց ծղցից հանել մի կապոց և մեկնել դէպի Գասպարը:

— Դա էլ թող քեզ մօտ մնայ. տոկոսն էլ որքան ողորմ ես հաշուիր:

— Ի՞նչ, ինչ արած, Պօղոս, պատասխանեց խանութպանը.— որ չես հաւատում... Ինչ անեմ, ժամանակն այնպէս է դառել, որ դու էլ չես հաւատում:

— Չը հաւատողի տունը քանդվի, ասեց Պօղոսը ձեռքի կապոցը դէպի բարձր ուղղելով.— Ինչպէս չես հաւատում. բայց իմ ուղածս էլ ախր այնքան մեծ բան չէ. դիտեմ որ կարող ես տալ:

— Շատ ես խնդրում, Պօղոս, հին աղ ու հացը չեմ մոռանայ, կը տամ, բայց քսանից աւել չեմ կարող:

— Դա էլ բաւական է, խօջա-Գասպար, երկու կամ երեք ամիս ժամանակով:

— Լաւ, վաղը կը գաս կը ստանաս:

Գասպարը առաւ կապոցը և խօսքն զգելով փոքրիկ մտաւոր մէջ, ասեց.

— Սա էլ չը լինէր, կարելի էր. բայց վնաս չուրի, թող այստեղ ընկնի. կամ ինձ մօտ, կամ քեզ մօտ, ես նոյնն է:

— Կարելի չէր որ հիմա տալիր:

— Օրհնակ, խօ զոգրանս ածած չէ, որ հանեմ քեզ տամ, ես էլ պէտք է ուրիշներից ստանամ, որ տամ քեզ: Առաւօտը Աստուած ողորմած է:

Նա զուրս եկաւ խանութից, սկսեց կողպել: Պօղոսը շտրակալութիւն յայտնելով հեռացաւ:

Գասպարը կրկին բացաւ խանութը, փոքրիկ մտաւորից հանեց կապոցը, դրաւ դրամներ:

(Կը շարունակվի)

կողմնակցական գիտականության ընկերությունների անդամները հրապարակում են ներկայ լինելու ընկերությունների արտադրող ընդհանուր ժողովին, որ լինելու է մարտի 13-ին, ուրբաթ օր, երեկոյան 7 1/2 ժամին: Այդ ժողովին պ. Տարապետյանը կը կարգադրի ղեկավարել «Բարեկամ» մշակութային մասին Միացեալ-Նահանգներում և Անդրկովկասում» Ներկայ կարող են լինել և կողմնակի անձինք:

Թիֆլիսի «գիթ» մարտը իր շնորքը ցոյց է տալիս: Մարտի սկզբներին մի քանի օր շարունակ Թիֆլիսում հիմնական, բոլորովին քաղաքական եղանակ էր. իսկ վերջին օրերը եղանակը անսպասելի կերպով փոխվեցաւ և սկսեց փչել սաստիկ հիւսիսային քամի, որի շնորհով քաղաքի վերջերսում անտանելի փոշի է բարձրանում: Առհասարակ, ինչպէս ամեն տարի, մարտ ամսվայ ընթացքում փոշիոսական եղանակ պէտք է լինի, որի պատճառով և քաղաքում բազմաթիւ են դահազան տեսակ հիւանդութիւնները:

Այսօր, մարտի 12-ին, Թիֆլիսի Կրեմլում յայտնի պիսիստուհի Նախագիտ Կարապետյանը:

Խտալայի Նէպոլէոն քաղաքի ռուսաց հիւպատոսարանի հաղորդագրութիւնից երևում է, որ Խտալայի մի քանի կէտերում, ինչպէս Տորէ-Սոնտոյի քաղաքում, Վենեցիայում, Ջենովայում և Չիլիպոտում, Վենեցիայում պէտք է կառուցանվեն աւազաններ և իր, ռուսաց կերտները այնտեղ հաւաքելու և այդտեղից վաճառահանելու համար, ոչ թէ միայն Խտալայի զանազան կողմերը, այլ և հարևան երկրները: Այդ ձեռնարկութեան գլուխ է կանգնել Պաերմոյի Վիլիկինտ յայտնի ֆիրման: Այդ ֆիրման յիշեալ տեղերում կերտների աւազաններ կառուցանելով՝ մտադիր է ռուսաց նաւթը տալով Շվեյցարիա, Գերմանիա և մինչև իսկ հիւսիսային Աֆրիկա: Վիլիկինտ ֆիրման, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրիները, կարծում է որ այդպիսի միջոցներ ձեռք առնելով՝ կովկասի նաւթով կարելի է մրցել ամերիկականի դէմ:

ԳՐՈՐԻՑ մեղ գրում են. «Մի քանի չափաւ առաջ Գորոն գաւառի Տղիկայի մի գիւղացուն կատաղած գայլ էր կծել: Այժմ, ինչպէս հաստատ աղբիւրներից լսում ենք, Թիֆլիսի նահանգապետը հեռագրել է այստեղի գաւառապետին, հրամայելով՝ տալ այդ գիւղացուն 200 ռուբլի և ուղարկել Օդեսա, որպէս զի այնտեղ Պաստորի սխեսմայով հիմնված հիւանդանոցում բժշկվին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ամերիկայի Միացեալ-Նահանգներում իրական սեռի էմանսիպացիայի հարցը էլի մի նշանաւոր քայլ արեց դէպի առաջ: Յայտնի իրողութիւն է, թէ Միացեալ-Նահանգներում կինը որպիսի մեծ դեր է կատարում կրթական, գաղութական և հասարակական գործունէութեան այլ և այլ ասպարէզներում. այնտեղ կինը ինքնուրոյն գրութեան է համարւում ձեռք բերած լինելով անկախ աշխատանքի ոյժ և ընդունակութիւն: Բայց այժմ Միացեալ-Նահանգներում կանայք, ինչպէս հաղորդում է «НОВОСТИ» լրագրի թղթակից Մակ-Գալան, ձգտում են քաղաքական հասարակութիւն ձեռք բերելու: Այնտեղ կանայք մի քանի տեղերում ձայն ունենին և քաղաքային վարչութեան ընտրութիւններում, բայց այդ իրաւունքը մինչև այժմ օրէնքով չէր հաստատված: Կանանց ձայնատուութեանը հաստատ իրաւունք տալու համար վաղուց է որ Միացեալ Նահանգներում պիտի պայքարէ լինում: Կանանց հասարակական հարցի ջերմ պաշտպանները բողոքում էին և պնդում էին, որ քանի կանայք ձայն տաւ չէին և անհաշիւ չէին, նոյնպէս հարկ չէ կարելի մինչև անգամ վերցնել: Բայց անա կանանց այդ ջիւղ ձգտումը առաջին յաղթանակը տարաւ փետրվարի 16-ին, և այդ պատիւը պատկանում է Միացեալ-Նահանգների կանգաւ շտաբին: Քաղաքային վարչութեան ընտրութիւններում կանանց ձայնատուութեան իրաւունքը տուող բիլլը ընդունվեցաւ Կանգալի օրէնսդրական ժողովում, և այժմ դրութիւն ունի իբրեւ օրէնք: Նոյնպիսի բովանդակութեան մի բիլլ ընդունվեցաւ և Նիւ-Եօրկի սենատի կողմից:

20 ձայնով ընդդէմ 9-ի: Անհրաժեշտ է անկայնել և այն, որ այդ բիլլը անցկացնելու համար իրական սեռի իրաւունքների պաշտպան դարձած կանայք և օրիորդներ մեծ ջանք և աշխատութիւն են թափել: Արդէն առաջին քայլը արված է, և անկասկած դրան կը հետևեն շատ ուրիշ շտապներ, — և այդպիսով Միացեալ Նահանգները պարծնելով կարող կը լինեն օրինակ հանդիսանալ կանանց էմանսիպացիայի իրադրոժման հարցի մէջ: Անկասկած ան կ'ա ղ ր ու թ և ա ն մէջ կ'ենը կարող կը լինի աւելի բուռն և աւելի համարձակ կերպով արտայայտել իր բոլոր ընդունակութիւնները և ձգտումները՝ հասարակական ամեն տեսակ գործունէութիւնների մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻՖԻՔԻԱՅՑ

Կ. ՊՈԼԻԱ, 2 մարտի
Վիճակիս տակաւն չէ փոխուած. Պատրիարքը հրաժարեալ կը մնայ. Կրօնական և Գաղաքական Ժողովներն անհամաձայն են. տաքսապը կը շարունակէ. ատենապետաց դիւանը իւր աղուէսի դերը կը կատարէ:

Կը կարծուի աւելի քան երեք թէ Սուլթանէն աւելի իւր պաշտօնեայնեան ունիւր են որ անպատճառ կուզեն դրաւել Պէշկիթաշի գերեզմանատունը: Արդը գրեթէ ամբողջութեամբ հակառակ է այդ գրաւման: Լրագիրը ունիւր որ հաղիւ հարկւր բաժանորդ ունին յուսահատած սկսել են ի նպատակ այդ գրաւման խօսել, յուսալով որ չորսը մը կը լինի իրենց և քանի մը ոսկի վարձատրութիւն կ'առնու: Միւս լրագիրները կամ կը դիմադրեն կամ կը լռեն առ երկուդի, ինչ որ դիմադրութիւն կը նշանակէ:

Պատրիարքը չարաթի օր Բ. Դուռը գնաց և տեսակցեցաւ Մեծ-Եպարքոսին և ուրիշ նախարարաց հետ. խօսակցութեան զխաւոր առարկայն եղաւ երուսաղէմի պարտուց ինչդերը, ի միջի այլոց խօսուած է նաեւ գերեզմանատան լինելոյ վրայ և Եպարքոսն յայտնած է Պատրիարքին թէ՛ այս միջոցիս իւր հրաժարելը օգտակար չէ. կը լսուի թէ Պատրիարքը տրամադիր իրենի հրաժարականն առայժմ ետ առնուլ:

Ժողովը նիստերը կը շարունակեն. Կրօնական Ժողովը խորհման Հայրիկի առաջնորդութեամբ կը դիմադրէ որչափ հնար է. Նուրան էֆենդի յուսահատած կը դիմէ Ատենապետաց դիւանի աջակցութեանը: Կրօն. Ժողովը կը պնդէ որ գրաւոր կերպով Սուլթանին դիմեն, իսկ Քաղ. Ժողովը կուզէ որ այս դիմումը դրաւել չը լինի, վրան զի եթէ գրաւոր լինի, անպատճառ Սուլթանին կը ներկայացուի և Սուլթանը հաւանօրէն կը հրամայէ որ մէկ կողմ դրուի այդ խնդիրը, վրան զի Սուլթանը չուզէ որ եկեղեցականը վերաւորուին, եկեղեցականը, որը ժողովուրդին վրայ այնքան մեծ ազդեցութիւն ունին: Սակայն մի քանի էֆենդիներ հոգ չեն ընել այս ամենը և կուզեն որ անպատճառ գերեզմանատունը յանձնուի, վստախն զի խոտորում առած են այդ բարձրաստիւն պաշտօնեայնեան որ օգնեն իրենց առաջնախաւ համար իրենց պաշտօնները մէջ:

Պատրիարքը մինչև այսօր քաջուած կը մնայ յերուսաղէմատուն, մինչև իսկ երբ իրեն նամակներ կը խրկուին, չը բանար երբ վրան Պատրիարքը դրած է: Անցեալ օր «Արևելք» խմբագրատունէն Պատրիարքին կը տանին, ըստ սովորութեան, երկու «Արձագանք» որոց զօտիւն վրայ դրած է «Ամեն. Զարուիւն Պատրիարք»: Պատրիարքը դայն չընդունէր, և Պատրիարք չեմ ըսելով և «Արձագանքը» ետ կը բերուի:

Այսօր Քաղ. Ժողովը դարձեալ նիստ ունի, տեսները:

Այս խնդրոյն վրայ փոքրիկ յօդուած մը հրատարակվեցաւ «Մասիս»-ի մէջ, խնդրոյն վրայ բաւական տեղեկութիւն կուտայ:

Այսօր կարևոր հեռագրիներ կը հասնին Կեսարիայէ:—Կեսարիոյ մէջ Մարտիրոս անուն տղայ մը կուզէ, չնքն դիտել ինչ պատճառաւ, մասնաւորապէս ընդունել և կը դիմէ տեղւոյն հեռագրէ Պոլիս և հրահանք կը խնդրէ. Պոլսէն հրահանք կուտան որ եթէ այդ տղան 15 տարեկան է, կարող է աղատօրէն կոծել փոխել. եթէ 15 տարեկան չէ, պէտք է դայն վերադարձնել իւր ծնողաց: Տղան 15 տարեկան չը կայ, հետեւաբար տեղական իշխանութիւնը գնա կը յանձնին ծնողաց:

Այս քործ անհանգուրժելի կը լինի տեղւոյն թրքաց. ինչ, և ե ա վ ու ռ մը ուզէ «Ճշմարիտ կրօնը» ընդունել և իսլամ կառավարութիւն մը մերժէ դպր. այդ կարելի է միթէ:

«Արեւելք» կը ծանուցանէ որ Ռուսիացի հայ մը կարևոր դուռն մը կտակեր է խորհման Հայրիկին. Միացեալն այդ դուռնը պիտի կարենայ դորձադրել ինչպէս որ ուզէ: Այդ կտակը ռուսաց դեսպանատունէն հաղորդուել է Սրբադանին:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բաղրաբայի վարձա քաղաքում, փետրվարի 12-ին, «Հայկական միութիւնը» ընկերութեան նախաձեռնութեամբ այնտեղի հայերը տօնեցին Վարդանանց տօնը հայոց վարձաբանի մէջ:

—Յղիպտոսի Գահիրէ քաղաքում, փետրվարի 12-ին տեղական հայերը, «Յառաջադիմասէր» ընկերութեան, առաջնորդութեամբ տօնեցին Վարդանանց տօնը. նոյն օրը երկուդեան էօզպէքի թատրոնի մէջ ներկայացրին «Վարդանանց պատերազմը»:

—Մակեդոնիայից եկած լուրերից երևում է, որ Սոթիսովի առաջնորդութեամբ այնտեղ մեծ պրոպագանդա է լինում:

—Վիլնայից գրում են, որ Բաղրաբայի մէջ ներկայումս գործող կուսակցութիւնները հաշտեցնելու համար Ռիդաբէյի ջանքերը կարելի է ապագին համարել. ներկայ հանդամանքներում այդ բանը դժուար թէ տեղի ունենայ, և ինքը Ռիդաբէյը մասամբ արդէն թերթած է խնամակալութեան խոյժը:

—Բերլինից գրում են, որ այն լուրերը, որոնք յայտնում էին, որ իբրեւ թէ բոլոր պետութիւնները մտադրութիւն ունեն միասին ճնշում գործելու Սօֆիայի կառավարչների վրա, — հաստատ չեն: Այդ մասին պետութիւնների Սօֆիայի ներկայացուցիչներն ոչինչ նոր հրահանգ չէ ուղարկված:

—Վիլնիւ կայսրի ծննդեան ինստիտուտեակը շնորհաբերու համար թիւրքաց Սուլթանի կողմից երկու ներկայացուցիչներ գնացին Բերլին: —Բաղրաբայից եկած լուրերից երևում է, որ այնտեղ բաղրաբայի հանրապետութիւն հաստատելու ցանկութիւնը օրից օր տարածվում է. ենթադրում են որ բաղրաբայի հանրապետութեան նախագահը կը լինի մի և նոյն ժամանակ դիւնեալ-Նահանգապետ Արեւելեան-Ռուսիայի:

—Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսր իր ծննդեան տօնի առթիւ գերմանական արտաքին գործերի մինիստրութեան ստաւը սեկրետար կուս Գոմ-Բիւմարկ Շէնհուզենին շնորհեց Սպիտակ Արծուի շքանշանը: Խլխան Բիւմարկի օրդանը այդ մի նշանաւոր գրաւական է համարւում ռուս-գերմանական յարաբերութիւնների լուսանալու վերաբերմամբ:

—Թիւրքիայի Սամաոն քաղաքում, ինչպէս հեռագրում է «Բլադերի գործակալութիւնը», մօտ 800 հոգի խմբվելով նահանգապետի բնակարանի մօտ՝ բողոքեցին Նիսիստի միապետութեան դէմ: Խառնակութիւնները ճնշելու համար ղօրք ուղարկվեցաւ:

ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ

Ֆրանս-գերմանական յարաբերութիւնների լարվելու պատճառով, յայտնի է, որ գերմանական կառավարութիւնը սկսել է խստութեամբ վարվել Ելզաս-Լոթարինգիայի իտալիկներին հետ: Գերմանական կառավարութեան հրամանով իտալիական մինչև 200 ընկերութիւններ և կուրքներ, որոնք հայտնի էին ցոյց տալիս դէպի Ֆրանսիան իսկ Մեցի ոտիկանութիւնը գրաւեց մեծ քանակութեամբ կաւից շինած է ի ու ի ն ու ի, որոնք դարձաբար էին Բուլաւիէի գլխուկ:

Խաչագործութիւնը, ինչպէս երևում է շարունակում է առաջադիմութիւն անել: Այս ինչ են դըրում Մոսկույի ռուս լրագրիներին՝ Ռուսաստանի Նիսիստի յայտնա հրահանգը, Ալեքսանդրով գաւառից: «Ամեն ձմեռ, հինգ օր գիւղացին սկսում է մի փոքր հանգստանալ, պարտիզայի են դաժանաւ անձինք ժողովրդի յոգեկան ծարաւը յաղեցնելու համար: Այդ մարդիկ, որոնք իրանց «չոյն» են անուանում, պատվում են, որ թուրքերը իրանց կողմուկ, հաճել են, և խնդրում են ողորմութիւն Սակայն ողորմութիւն ինչդրելուց դատ, դրանք լրագրում են զանազան թախմաններ, խաչեր, տեղորոշմաններ և հանդուգնալի պատանի և ի վաճառելով: Գրանք

հալածում են հիւանդներից «չար հողիներին» և պատաններին խելքից հանում են իրանց ճիւղաւորին պատմութիւններով՝ դժոխքի և հանդերձեալ կեանքի մասին: Շատ անգամ այդպիսի «չոյն» չէ խորշում և ուժով խել, և նոյն իսկ գողանալով հրանց գործունէութեան ամենայնաբար ժամանակը մեծ պատն է: Նորերումս այդ դաւաճող ղեկավարները եկան այդպիսի մի քանի արեւելիներ, իրանց արտութեան բոլոր պարագաներով: Նրանք կաղմեցին դիւղում ժողովներ և սկսեցին քարոզչներ կարգաւ, մեղաւոր-գիւղացիներին հողու փըրկութեան համար: Այդ քարոզները շատ անգամ տեւում էին մինչև կէս դիշեր: Մի այդպիսի սրբազան քարոզից վերադառնալով, երկու գիւղացիներ իրանց ձիաներին այլ ևս գոմում չը գտան: Ինքը գիւղացիները մտածել անգամ չէին կարող, որ այդ քարոզ խօսող սուրբ-հայրերի դորն է: Սակայն դադարեցր շուտով բացվեցաւ տեղական ուրիշներին շնորհով, որը նկատելով քարոզ խօսողները մէկի մօտ ոսկի ժամացոյց, ոսկի մատանիներ՝ սկսեց կասկածել: Քննութիւններից երևեցաւ, որ այդ քարոզ տուղ ս ռ է ը ռ ուղղափառներ չեն, յոյներ չեն, այլ հայեր, որոնք նախօրոք պաշտանաւորելով տեղական գնչուների հետ՝ եկել են ձիեր գողանալու: Այդ նպատակով էլ նրանք սկսել են հողու փրկութեան համար քարոզներ խօսել, և գիւղացիներին հեռացնել իրանց տներից, որոնց բացակայութեան միջոցին գնչուները դալիս և ձիերը դողանում են: Այդպիսի և ուրիշ տեսակ շատ բաներ են պատահում գիւղացիների հետ: Սուրբ-հայրերը արդարաւատութեան ձեռքը մատնեցան, և հաղիւ կարողացան աղատվել ամբոխի կատաղութիւնից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 մարտի: Այսօր հրատարակված կառավարական հաղորդագրութեան մէջ ասված է, որ, չը նայելով 1886 թվ. դեկտեմբերի 3-ի պաշտօնական յայտարարութեանը այն բանի մասին թէ՛ Գերմանիայի հետ մեր ունեցած յարաբերութիւնները որ և է վտանգի առիթ չեն կարող տալ, մի քանի լրագիրներ շարունակում էին խօսել գերմանական կառավարութեան դէպի մեղ ունեցած անբարեկամ յարաբերութիւնների մասին և վերջերս իրանց անպափաւարութիւնը մինչև այն տեղը հասցրին, որ չամալեցին Բուլլուկում կատարված արեւմտեղ պատմիների պատասխանատուութիւնը բարձել այդ կառավարութեան և նրա գործակալների վրա Բաղրաբայում Բաբրայականութեան կանոնները պարտաւորեցնում են հաստատել այդքան ծանր մեղադրանքները ապացոյցներով, և եթէ այդ ապացոյցները չը լինեն, այն ժամանակ չէ կարելի սահմանադիմ անցկացնել մեղադրանքի և դատարկ չարախօսութեան մէջ, որ յարմար չէ թէ իրան յարող մամուլի արժանաւորութեանը և թէ մասնաւոր անձի արժանաւորութեանը: Կայսերական կառավարութեան ըստացած տեղեկութիւնների համեմատ, գերմանական ընդհանուր հիւպատոսը Սօֆիայում, հինգ օր մահուան դատաւիճի մասին տեղեկութիւն ըստացաւ, իսկոյն միջամտեց յօդուտ Ռուսիայի ասպետաւորութեան մասնակցողներին, և նա ամենին պատասխանատու չէ այն արագափոթութեան համար, որով դատաւիճուր կատարվեցաւ: Միւս կողմից գերմանական փոխ-հիւպատոսը Բուլլուկում բարիխօսեց դատապարտեալների համար, և նրա միջամտութեան շնորհիւ, ի միջի այլոց, մահուան պատժից ազատվեցաւ ռուսաց հպատակ Բոլման: Հաւատարմով իր շահերի պաշտպանութիւնը գերմանական աղէտներին Բաղրաբայում, Կայսերական կառավարութիւնը այդպէս վարվելու համար լիակատար պատճառներ ունի, և այդ միջոցը ընթերցող հասարակութեան աչքում վայր զցել աշխատող լրագրական յօդուածները անհիմն են: Երկէ ֆինանսների մինիստրը ընդունեց հողային փոխադարձ վարկի ընկերութեան լիազօր պատգամաւորութեանը Տեղեկութիւն է ստացվել, որ Գրեդդեմով վախճանել է գրականական գործիչ Պալլէ Վասիլիւի: Անհնկով: «Нов. Время» հաղորդում է, որ ներկայումս գործածվող առեւտրական կանոնադրութեան լրացումների և փոփոխութիւնների նախագիծը վերջնականապէս որոշված է: Մուրապային կանոնադրութիւնը առեւտրական ընդհանուր կանոնադրութիւնից հանված է և առանձին հատու է կաղում, իսկ առեւտրական առանձին պարտադիրներ սահմանելը անյարմար է համարված:

ՍՕՖԻԱ, 9 մարտի: Երէկ Ֆիլիպպոսով մեծ ժողով էր կաղմած Արեւելեան-Ռուսիայի զանազան գաւառներից եկած պատգամաւորների լի-

